№ 167 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 2

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 2 № 167

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան .	6 դօլար
Եւրոպա » . .	30 ֆրանկ
Պարսկաստան » .	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

Հաշւապահական եւ Գրասենեկային
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
(Իններորդ տարի)

Կուրսերում աւանդվում են. հաշւապահութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական օրէնսգիտութիւն և գեղագրութիւն։ Ցանկացողներին սովորեցվում է գրող մեքենայի վրա աշխատել։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1908 թ.

Կուրսերը շարունակվում են ոչ պակաս 6 ամսից։ Պարապմունքները տեղի են ունենում երեկոները, շաբաթական երեք անգամ։

ՈՒՆԿՆԴԻՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ ԱՆՁԵՐ՝ ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ

Ամբողջ կուրսի վճարն է 40 րուբլի

Խնդիրները—Թիֆլիսի առևտրական դպրոցի դիրեկտորի անունով—ընդունվում են դպրոցի գրասենեակում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

Դպրոցի դիրեկտոր՝ Գ. Գեխտման

առ. (ապ.) (Հ. Չ.) 12—3

Էմմ. քահ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Լոյս տեսան
1) «Ընտիր Հատուածներ» ա. մաս—արձակ, հինգերորդ տիպ, 370 երես.
2) «Ընտ. Հատ.» Բ. մաս—բանաստեղծութիւն, երկրորդ տիպ, 416 երես.

Երկուսն էլ բարեփոխված և մեր նորագոյն գրողների երկերով հարստացրած։

Իւրաքանչիւր մասի գինն է 80 կոպ.։ Գումարով գնողներին՝ 65 կոպ.։ Երկու մասերը միասին՝ 1 ր. 50 կոպ.։ Գումարով գնողին՝ 1 ր. 20 կ.։ Յօրինողին դիմողը ճանապարհածախս չէ տալիս։

Դիմել՝ 1) МОСКВА, Свящ. Э. Назарянцъ.
2) ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля.
3) БАКУ, Книжный магазинъ «Сотрудникъ»
(ա.) 10—2

ՆՐԱՆՔ, որոնք բաւականաչափ հմուտ են կար ու ձևի մէջ և ցանկանում են վարպետուհու—վարժուհու պաշտօն ստանձնել շրջերի պատուէրներ ստանալու համար Ալէքսանդրապօլի քաղաքային դպրոց արհեստանոցում ամսական 50 րուբլի ռոճիկով, կարող են դիմել Ալէքսանդրապօլի քաղաքային վարչութեան ոչ ուշ, քան մինչև այս տարվայ օգոստոսի 15-ը, ներկայացնելով կարուձևի դասընթացքի աւարտման վկայականները և թղթերը և առանձին անձերի կամ հաստատութիւնների վկայութիւնները իրանց պրակտիկայի մասին։

(Հ. Չ. Հ.) առ. 3—2

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Երէկ, օգոստոսի 1-ին, Թիֆլիսում կայացաւ Թիւրքահայերի մի ժողով խորհրդակցելու այն բոլոր պարագաների մասին, որոնք կապ ունեն հայրենիք վերադառնալու խնդրի հետ։

«Մշակի» վաղվայ համարում մենք կը տանք տեղեկութիւններ այդ ժողովի և նրա որոշումների մասին։

Ժողովի առաջ դրված էր հերթական մի խոշոր խնդիր, որի քննութիւնը, մշակումը և լուծումը կարօտ էին յատուկ ուշադրութեան և կազմակերպութեան։

Վերադարձի հետ կապված շատ հանգամանքներ, ինչպէս են անցագրերի, հին ապառիկների, ճանապարհորդական արտօնութիւնների, նպաստների և ուրիշ խնդիրներ, հանդէս էին եկել իրականութեան մէջ և մասնաւոր խօսակցութիւնների առարկայ էին դարձել։ Պանդուխտ Թիւրքահայերը չը գիտէին ում դիմել իրանց հետաքրքրող հարցերին պատասխան ստանալու համար և առհասարակ չունէին մի մարմին, որի միջոցով դիմումներ անէին Կ. Պօլսի պատրիարքարանին, Թիւրքական հիւպատոսներին և ուրիշ ատեաններին։

Իսկ խնդիրներ կարող են ծագել ամեն օր զանազան տեսակի։

Այն բազմաթիւ և ծանր տառապանքներից յետոյ, որ քաշեց Թիւրքահայը, թողնելով իր ծննդավայրը և թափառելով օտար երկիրներ, պարտաւորութիւն էր դրվում ամենի վրա, որ պատահականութեան մատնված չը լինէր տասնեակ հազարաւոր տարագիրների վերադարձի խնդիրը և նա փոքր ի շատէ յուրջ ուշադրութեան առարկայ դարձած լինէր՝ վերադարձը նպատակայարմար եղանակով կազմակերպելու համար։

Թիւրքահայի պանդխտումը դէպի մեր երկիրը, անշուշտ, չէ դադարելու ռուս-Թիւրքական սահմանագիծը երթևեկութեան համար ազատ յայտարարվելուց յետոյ։ Պանդուխտներ լինելու են և ապագայում։ Բայց ներկայ դէպքում գլխաւորապէս հետաքրքրում է այն պանդուխտների հարցը, որոնք կտրըված էին մայր հողից և հնարաւորութիւն չունէին վերադառնալու դէպի իրանց օջախները և վերականգնելու իրանց քայքայված տնտեսութիւնը։

Իսկ, անշուշտ, ապագայում քննութեան առարկայ պէտք է դառնայ երթևեկութիւնը կանոնաւորելու խնդիրը կեանքի սովորական պայմաններում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 31 յուլիսի

Երկարում են 1908 թ. փետրվարի 14-ի ուկազով Կովկասի Փոխարքային տրված առանձին լիազօրութիւնները Կասպից ծովի ամբողջ առևտրական նաւատորմի վերաբերութեամբ։ («Հ. Գ.»)

Թեհրան, 31 յուլիսի

Առաջին մինիստր Մուշիր-ուս-Սալթանէն ստացաւ սադրազամի տիտղոս։ Թեհրան եկաւ Զիլլի-սուլթանը, որ գնում է Եւրոպա։ («Հ. Գ.»)

Տուլօն, 31 յուլիսի

Արտիլլերիական «Կուրօն» կրթական նաւում առաջացաւ թնդանօթի պայթում. չորս հոգի սպանվեցին, 12-ը վիրաւորվեցին, որոնցից 4-ը ծանր կերպով։ («Հ. Գ.»)

Լօնդօն, 31 յուլիսի

Հօնգկօնգից հաղորդում են, որ Կօնխաում չինական հազար զինուոր ապստամբվեցին այն պատճառով, որ ձերբակալեցին նրանց ընկերներից մէկին ոգելորված կերպով թուղթ խաղալու ժամանակ։ Ապստամբները սպանեցին հրամանատարին, օֆիցէրներից մի քանիսին և յարձակում գործեցին զինուորական բանակի վրա Ինիւնգի մօտ։ Զօրքը փախաւ։ («Հ. Գ.»)

Ռօստով Դօնի-վրա, 31 յուլիսի

Նախիջևան և Կիզիտերինկա կայարանների միջև խորտակվեց ամարանոցային գնացքը։ Կան վիրաւորվածներ և սպանվածներ։ («Հ. Գ.»)

«N. Fr. Pr.»-ին հեռագրում են Պօլսից, որ մակեդօնական ֆինանսական մասնաժողովի ռուս անդամներ Մանդելշտամ ու Չչերբաչեվը հրաման են ստացել Պետերբուրգից՝ մերձաւոր ապագայում մասնաժողովի նիստ գումարել։

(Սեփակ. Թղթկ.)

Կարս, 30 յուլիսի

Կարսը այսօր դատարկվում է։ Ոչ մի կառք չը մնաց քաղաքում։ Գնում են դէպի Սարիղամիշ։ Գնում են կառքերով, ձիերով, ֆուրգօններով, հեծանիւներով, ոտով…։ Գնացողները գնացին, իսկ մնացողները սպասողական դրութեան մէջ տանջվեցին մինչև երեկոյեան ժամը 9-ը, երբ բազմաթիւ գնացողները վերադարձան ուրախութեան աղաղակներով՝ բերելով իրանց հետ ութ տարի Էրզրումի բանտում տանջված, մաշված հայ երիտասարդներին, որոնք բանտարկված էին որպէս քաղաքական յանցաւորներ և պիտի տանջվէին բանտում 101 տարի։ Հազարաւոր բերաններ զանազան տեղերից ուրա՜ էին աղաղակում. դավուլ զուռնի ձայնը, խառնվելով ժողովրդի երգերի հետ, լեռներն էր թնդացնում։ Ոչ մի կաթողիկոս կամ մարմնաւոր իշխանութիւնից եկած ամենաբարձր անձն չէ արժանացել այսպիսի փառաւոր ընդունելութեան։

Արամ

ԹՈՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

„Рѣчь“ լրագիրը իր թղթակցից ստացել է հետևեալ հեռագիրը.

Կ. Պօլիս, 26 յուլիսի

Առաջիկայ շաբաթվանից սկսվում են նախնական ընտրութիւնները պատուիրակներ ընտրելու համար։

Պօլսի երիտասարդ-Թիւրքերի պարիզեան կոմիտէների միջև պառակտում տեղի ունեցաւ։ Պարիզեան կոմիտէտը իրանից ներկայացնում է աւելի արմատական հոսանք և դեռ մի քանի օր առաջ սրանից պահանջում էր սուլթանի գահընկէցութիւնը։ Պօլսի կոմիտէտը, իրան լօյալ պահելով սուլթանի նկատմամբ, հնարաւոր չէ համարում պարիզեան կոմիտէտի հետ միասին գործել։

Երէկ առաջին անգամ Պօլսում հասարակական համերգի ժամանակ հանդէս եկաւ զինուորական նուագախումբը։ Ի միջի այլոց նրանք նուագեցին մինչև այժմ արգելված սիլիստրէական մարշը, որ գրված էր 1828 թւին ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ, և որը մի օրհներգ է ազատ հայրենիքին ուղղված։ Ի պատիւ սուլթանի հնչող աղաղակները այժմ արտայայտվում են հետևեալ ձևով. «Կեցցէ սուլթանը, քանի ապրում է ազատութիւնը»։

Այստեղ, 15 տարվայ արգելումից յետոյ, տրվեց հայերէն լեզուով ներկայացում, որը արտասովոր ոգևորութիւն պատճառեց։

Նախկին ծովային մինիստր Հասան-Ռամի-փաշայի կալանաւորութեան առիթով «N. Fr. Pr.» լրագիրը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում։ Զօրս ծառայողներ ոստիկանութեան մինիստրութիւնը բերին մի անգին սնդուկ, որ գրաւել էին երիտասարդ-Թիւրքերը ծովային մինիստրութեան բնակարանում։ Սնդուկը երբ բաց արին, գտան այնտեղ 4 միլիոն լիրա։ Դրամները հաշուելու ժամանակ Ռամի փաշան նստած էր հարևան սենեակում կալանաւորուած։ Նրա հետ միաժամանակ կալանաւորուած էր և ներքին գործերի մինիստր Մեմդի փաշան։

Իզզէթ փաշան այժմ գտնվում է Իտալիայում։ Այնտեղից նա հեռագիր է ուղարկել սուլթանին, որով, արտայայտելով իր հաւատարիմ հպատակու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

(Սեփական Թղթակց.)

Կ. Պօլիս, 23 յուլիսի

Այսօր առաւօտ, ժամը 8-ին, գերմանական հսկայ շոգենաւը մօտեցաւ Ղալաթիայի քարափին և ես իմ ուղեկիցների հետ միասին (2 հայ և 3 ռուս, բոլորն էլ Թիֆլիսից, բացի գեներալ Բաուէրից և իր կնոջից) մտայ քաղաք։ Աչքերիս չեմ հաւատում տեսնելով այժմեան Կ. Պօլիսն, ուր անց եմ կացրել ոչ միայն իմ մանկութիւնն, այլ և դրանից յետոյ քանիցս անգամ այցելել եմ և բնակվել։ Շոգենաւը մօտենում է և ոչ մի պաշտօնեայ, ոչ ժանդարմ, ոչ պօլիցիական և ոչ նոյնիսկ մաքսատան ծառայող չէ դիմաւորում մեզ։ Մեր իրեղէնները յանձնում ենք հիւրանոցի կոմիսիօներին և մենք մեր անցագրերը մեր գրպանում դուրս ենք գալիս, առանց քննութեան և հարցուփորձի, կարծես Անգլիայում լինենք, թէև այնտեղ էլ գոնէ մաքսատան պաշտօնեան դիմաւորում է ձեզ։ Շատ լաւ կարող էինք առանց անցագրի էլ գալ, եթէ Բաթումի ռուսական իշխանութիւնը թոյլ տար մեզ այդպէս մեկնել… Ես առաջնորդում եմ ուղեկիցներիս, որոնք առաջին անգամն էին Կ. Պօլիս գալիս։ Շրջում ենք ահագին քաղաքի փողոցները, որոնք լի են խուռն բազմութեամբ, և հազիւ ազատ անցուդարձ ենք անում։

Ամբողջ քաղաքը զարդարված է օսմանեան դրօշակներով, ի նշան ցնծութեան, սահմանադրութեան վերահաստատման առիթով։ Խանութների պատուհանները զարդարված են, ո՞վ կարող էր հաւատալ, սուլթան Համիդի պատկերով, բայց ինչպիսի՜ արձանագրութեամբ։ Նա, որին կոչում էին «կարմիր» մարդը, այժմ նրա կենդանագրի շուրջը գրված են ֆրանսիական յեղափոխութեան 3 նուիրական խօսքերը՝ Liberté, Egalité, Fraternité (Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն)։ Զանազան գավրօշներ, Թիւրք, բայց մասնաւորապէս հրէայ պատանիներ, աղմկալից բացագանչութիւններով, յեղափոխական բովանդակութեամբ, carte-postale-ներ են ծախում, որոնց վրա նկարված են հին րէժիմի ամենայայտնի ներկայացուցիչները, որոնք այսօր կամ աքսորված են, կամ փախած են, կամ պաշտօնանկ են եղած։ Մի Թիւրք երեխայ, որքան ձայն ունի, բղաւում է՝ «6 կաւատի գլուխ 10 փարայով» (2 կոպէկ). մի հրէայ պատանի կանչում է՝ «6 շան գաւակ 20 փարայով»։ Մօտենում եմ տեսնելու, թէ ի՞նչ պատկերներ են դրանք, և գտնում եմ, որ այսօրվայ «կաւատներն» և «շան գաւակները» 10 օր առաջվայ ամենայայտնի փաշաների գլուխներն են զանազան կենդանիների մարմնի վրա դըրված… այն փաշաների, որոնցից դեռ երէկ՝ ոչ միայն հայ և Թիւրք հասարակ ժողովուրդը, այլ մինչև իսկ մինիստրները դողում էին։ Ժողովրդական ծաղրաբանութեան և ամենադառն զայրոյթի առարկայ են մանաւանդ յայտնի լրտեսապետները. մի գունաւոր պատկերի մէջ դրանք նկարված են խառնիխուռն մի զամբիւղի մէջ գցված. զամբիւղն էլ դրված է մի էշի վրա, որը քշում տանում են դէպի ծով, իսկ տակը Թիւրքերէն, հայերէն և յունարէն լեզուներով գրված է. «լրտեսների վիճակը»։

Փողոցներում ոչ մի ոստիկան չէ երևում. իսկապէս մի ընդհանուր անիշխանութիւն է տիրում քաղաքին, որ այժմ շատերին սկսել է մտահոգութիւն պատճառել։

Չը նայելով ոստիկանութեան կատարեալ բացակայութեան, քաղաքում զարմանալի կարգ ու խաղաղութիւն է տիրում. ի բաց առեալ 2 Թիւրքի սպանութիւնը զինուորների ձեռքով, ոչ մի անկարգութիւն չէ պատահել մինչև հիմա։

Ինձ պատմեցին, որ երէկ երիտասարդ-Թիւրքերի կոմիտէն մի շրջաբերական է ուղարկել բոլոր դեսպանատները, թէ ինքը իր գործակալների միջոցով ամեն տեղ հսկում է քաղաքի ապահովութեան վրա և թէ որևէ անկարգութեան երկիւղ չը կայ։ Այսօր լրագիրները հաղորդում են, թէ Պարիզի օսմանեան միացեալ կոմիտէի կողմից մի պատգամաւորութիւն է եկել այստեղ, որ 4 և կէս ժամ տեսակցել է սադրազամ Սաիդ-փաշայի հետ, բայց արդիւնքը չէ յայտարարված։ Հայ թերթերը հայ յեղափոխականութեան օրգաններից ազատ կերպով արտատպումներ են անում։

Բայց վերջին երկու օրը իրերի դրութիւնը անհանգստացնող բնաւորութիւն է ըստացել։ Քիւչիւք Սաիդ-փաշան իր մեծ ժողովրդականութիւնը սկսել է կորցնել, որովհետև, նրա համաձայնութեամբ, սուլթանը ծովային և պատերազմական մինիստրներին ինքն է անուանել, փոխանակ թոյլ տալու որ առաջին մինիստրը՝ սադրազամն ընտրէ։ Քեամիլ-փաշա և մանաւանդ շէյխ-իւլ-իսլամն, որին շատ են գովում իր ազատամտութեան համար, մեծ ընդհարում են ունեցել Սաիդ-փաշայի հետ և շէյխ-իւլ-իսլամը հրաժարական է տուել։ Մի յայտնի հայ-կաթոլիկ հրապարակագիր՝ Անտոն Ալիք՝ լրագրի միջոցով գանգատւում, է թէ իսկական հաւասարութիւն չը կայ, քանի որ 17 մինիստրական աթոռներից ոչ մէկը չէ առաջարկված ոչ հայի և ոչ յոյնի. այն միակ քրիստոնեայ մինիստրն էլ, որին մի քանի օր նշանակել էին, հրաժարվել է։ Այդ քրիստոնեայ մինիստրը Նաում-փաշան է, նախկին Լիբանանի նահանգապետ, արաբ-կաթոլիկ։ Կայ մի բարձր հայ պաշտօնեայ, որ մինիստր տիտղոսն է կրում, բայց նա իրօք կառավարութեան գործերին մասնակից չէ, այլ սուլթանի անձնական գանձի և գոյքի ընդհանուր կառավարիչն է (Յովհաննէս Սագըզ, հայ-կաթոլիկ)։ Թուրք մամուլը և նրան հետևելով հայ և յոյն թերթերը կծու քննադատականներ են գրում, պահանջելով որ սուլթանը սահմանադրութեան ոչ մի կէտը չը խախտէ (ակնարկելով 2 մինիստրների իր կողմից անուանման)։ Բացի դրանից երիտասարդ Թիւրքերի կոմիտէն, որ հրապարակի տէրն է երևում, պահանջում է, որ այժմեան մինիստրութիւնը ամբողջովին ասպարէզից հեռանայ իբրև սահմանադրութիւնը գործադրելու անկարող և անյարմար անձերից բաղկացած։ Սաիդ փաշան այս պահանջման դեռ չէ ուզում հետևել և միայն մասնակի փոփոխութիւններ է անում մինիստրական կազմի մէջ։ Ըստ այսմ հիմա իրօք հաստատուն սահմանադրական մինիստրութիւն դեռ չը կայ։ Ամենքը անհամբեր սպասում են, թէ ինչպէս կը վերջանայ այս ճգնաժամը։ Հաւանական է, որ Սաիդ փաշան հեռանայ ասպարէզից և երիտասարդ Թիւրքերի աւելի համակիր նոր մինիստրութիւն կազմվի։

Մի շշուկ կայ քաղաքում, թէ ապարէզից հեռացած սուլթանական ֆաւորիտները և հին րէժիմի պաշտօնական բարձր պաշտօնեաները երիտասարդ-Թիւրքերի դէմ մի [illegible] հին-Թիւրքերի կուսակցութիւն կազմելու [illegible] նոր [illegible] մասին [illegible] շատերը [illegible] մեծ բարդութիւններ առաջ գալ, որովհետև [illegible] նոր սուլթանի վրա [illegible] հին-Թիւրքերի մէջ շատ կան չափազանց [illegible] ժողովրդի [illegible]

Հետևեալ [illegible] ազգային [illegible] հայ-Թիւրքական յարաբերութեան [illegible] audiatur et altera pars [illegible]

Նոր [illegible] եպ. [illegible] գրաւել արդէն։

Մարութեան

թեան զգացմունքները, հաղորդում է, որ ինքը միշտ պատրաստ է իր տիրոջը ծառայելու, եթէ վերջինս կարիք զգալու լինի։ Կ. Պօլսի մամուլը փախստական փաշայի այդ քայլի մէջ նկատում է կատակ, որը կարող է թոյլ տալ իրան միայն այդ մարդը, որը փախցնելով 20 միլիոն լիրա՝ այժմ գտնվում է հասանելիութեան սահմաններից դուրս։ («Рѣчь»)

—

«Vossiche Zeit.»-ին հաղորդում են Պօլսից, որ զինւորական դատարանը մահվան պատժի է դատապարտել ծովային օֆիցէր Անմէզին, որը կաշառելով նաւաստիներին դրդում էր ցոյց անել սահմանադրութեան դէմ։ Նաւաստիներից մի քանիսը Անմէզի դրդմամբ համոզում էին ամբոխին ջարդ ու փշուր անել օտարերկրեայ դեսպանատները։

(Մեփ. Թղթ.)

—

Կ. Պօլիս, 26 յուլիսի

Յուլիսի 22-ին այստեղ առաջին անգամ հայերէն ներկայացում տրվեց, բայց օրինաւոր դերասանական խումբ չը կայ դեռևս, և յաճախորդները այդ պատճառով քիչ են։

Ուզում էք իմանալ, թէ սուլթան Համիդ ինչ մեծ մետամորֆօզի է ենթարկվել։ Երէկ, յուլիսի 25-ին, ուրբաթ օր, սելամլըքի ժամանակ նա ժողովրդին երեաց «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» նշանակող կարմիր rosette-ը կրծքին դրած..., այն, որ այժմ կրում են իրանց բուտօնիէրների վրայ բոլոր երիտասարդ-թիւրքերը։

O tempora, o mores!

Սարուխան

—

Կ. Պօլսից հեռագրում են „Вечеръ" լրագրին.

Ամբողջ հետաքրքրութիւնը կենտրոնացած է Աբդիւլ-Համիդի հիւանդութեան վրա։ Պալատից րօպէ առ րօպէ տեղեկութիւն է ստացվում, որ սուլթանը ուժասպառ է լինում, ուշաթափվում է և այլն։ Այս անգամ արդէն ոչ ոք չէ մտածում, որ Աբդիւլ-Համիդի հիւանդութիւնը դիպլոմատիական է։ Մինչև անգամ երիտասարդ-թիւրքերը, որ առհասարակ մեծ անվստահութեամբ են վերաբերվում դէպի սուլթանը, չեն թաքցնում, որ սուլթանի հիւանդութիւնը շատ լուրջ է, և որ Թիւրքիան պէտք է հոգ տանէ գահաժառանգի մասին։

Երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը մեծ ուշադրութիւն է դարձնում մամուլի օրգանների վրա. Նա երիտասարդ-թիւրքական շարժմանը հաւատարիմ մնալու երդումն է տալիս երիտասարդ-թիւրքերի բոլոր լրագիրներին ու նրանց հրատարակիչներին։

Հին ռեժիմի կողմնակիցները այդ առիթով հեգնութիւններ են անում, նկատելով որ երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը չէ հաւատում իր կողմնակիցների անկաշառակերութեանը, թէև շարունակ կշտամբում է հին-թիւրքերին գողութիւնների, յափշտակութիւնների և կաշառակերութիւնների մէջ։

Այդ հեգնանքները այնուամենայնիւ չեն խանգարում երիտասարդ-թիւրքերին իրապէս երկրի տէրը մնալ, որը հաւասարապէս ընդունվում է ինչպէս թիւրքերի, նոյնպէս և օտարերկրեայ դեսպանութիւնների կողմից։

Երիտասարդ-թիւրքերի բանա՛կի մէջ ներկայումս արդէն նկատվում է երկու հոսանք. մէկը զուտ երիտասարդ-թիւրքերի, որոնք կանգնած են ամենաընդարձակ ազատամիտ բարենորոգումների հողի վրա, այսինքն կօսմօպօլիտական ոգով, իսկ միւսը ազգայնական, որոնք ձգտում են վերանորոգել Թիւրքիան ընդարձակ բարենորոգումների ճանապարհով, բայց միևնոյն ժամանակ օսմանեան մեծ կայսրութիւն հիմնելու տազորված, նպատակ ունենալով վերադարձնել Արևելեան Ռումիլիան, Բօսնիան և Հերցեգովինան։

—

Կ. Պօլիս, 31 յուլիսի

Հին Սերբիայից և Ալբանիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, թիւրքերը լուրջ կերպով ձեռք են զարկել կարգ ու կանոն մտցնելու երկրում։ Այսպէս, Միտրօվիցայում, մի քրիստոնեայի սպանութեան համար, իշխանութիւնները կախեցին մի մահմէդականի։ Պրիզրէնի շրջակայքում ժանդարմները քանդեցին մարդասպան ալբանացու տունը։ Այդօրինակ տակտիկան այդ երկիրներում չեղած տակտիկա է և զգաստացուցիչ կերպով է ազդում ալբանացիների վրա. տեղական քրիստոնեաների մէջ այն հաւատն է ներշնչում՝ թէ վերջապէս տանելի գոյութեան ժամանակն է հասնում։

Նկատելի է նաև անկեղծ ցանկութիւն պաշտպանելու զօրքերի կարգապահութիւնը։ Բեանյում երկու զինւորներ գնդակահարվեցին հրամանատարի կարգադրութեամբ երկու բուլգար կանանց վրա բռնութիւն գործ դնելու համար։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 31 յուլիսի

Աքսորից վերադարձաւ Ֆուադ-փաշան։ Ղալաթիայի ափին ժողովվեց հարիւր հազարաւոր ամբոխ։ Բազմաթիւ նաւեր և նաւակներ դիմաւորելու դուրս եկան, Ֆուադին տանում էին ձեռքերի վրա։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 25 յուլիսի

Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնները երէկ և այսօր շատ յուզիչ տպաւորութիւններ են թողնում։ Այստեղ նախատեսում են որ խոշոր անցքեր են տեղի ունենալու մօտիկ ապագայում։ Սուլթանի առողջութիւնը բաւականին վատթարացել է վերջին ժամանակներս։ Նա շուտ շուտ ուշաթափվում է։ Մերձաւորները երկիւղ են կրում նրա կեանքի համար։

Երիտասարդ-թիւրքերի կոմիտէտի իշխանութիւնը մայրաքաղաքում օրըստօրէ աճում է։ Երէկ կոմիտէտին հաւատարմութեան երդումն տուին 3,000 պահեստի զինւորներ։ Միաժամանակ աւելանում է նաև կոմիտէտի կասկածոտութիւնը, որի շնորհիւ ամենայն օր, նրա պահանջի համաձայն, բազմաթիւ կալանաւորութիւններ են կատարվում։

Խիստ կասկած է յարուցել իր դէմ «Համիդիէ» կրէյսէրի հրամանատարը, որ նոր վերադարձել էր Սալօնիկից Պօլիս։ Ենթադրում են, որ կրէյսէրը պատրաստ էր պահում այն դէպքի համար, եթէ սուլթան Աբդիւլ Համիդը ուզենար փախուստ տալ Պօլսից։

Միաժամանակ Թիւրքական մայրաքաղաքից հեռագրում են, որ գաւառական մի քանի զօրաբանակների մէջ նոր խռովութիւններ են սկսվել։ («Р. В.»)

—

Պարիզեան «Liberté» լրագիրը, առաջ բերելով սուլթանի կեանքի դէմ կատարված անաջող մահափորձի տեղեկութիւնը, հաղորդում է, որ Պօլսի կօմիտեթը անցեալներում մի ուլտիմատում էր ուղարկել սուլթանական պալատը, որի մէջ յիշված են հետևեալ կէտերը. անմիջապէս արձակել ծառայութիւնից 20,000 հոգուց բաղկացած սուլթանական թիկնապահ գունդը, հրատարակել օրէնք ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին և ընդունել մինիստրական պատասխանատւութեան սկզբունքը։

Մերժման դէպքում կօմիտեթը սպառնում էր գահընկէց անել սուլթանին, նրա տեղ գահ բարձրացնելով արքայազն Րեշադին։ Սուլթանի վրա այդ ուլտիմատումը ճնշող տպաւորութիւն թողեց և այդ հանգամանքից հարկադրված նա ընդունեց Սաիդ-փաշայի հրաժարականը, որ արդէն կորցրել է իր վստահութիւնը երիտասարդ-թիւրքերի կօմիտեթի առջև։

Օգտվելով առիթից հարկաւոր ենք համարում յիշել, որ արքայազն Րեշադը Աբդիւլ-Համիդի մեծ եղբայրն է։ Նա այժմ 65 տարեկան է։ Գահի թեկնածուների մէջ նա ամենատարեգոյնն է։ Նրա հետ միաժամանակ յիշվում են Աբդիւլ-Ազիզի աւագ որդի Իւսուֆ Իզզէդդինին, որը այժմ 51 տարեկան է։

—

Թիւրքական լրագիրները հետևեալ կոչն են հրատարակել, «Շուրայը Օսմանիէի» խմբի կողմից, ուղղված Անատօլիայի զինւորականներին և ժողովրդին.

«Ռումելիի ձեր զինւորական ընկերները իրերի դրութիւնը ըմբռնեցին։ Նրանք հասկացան, որ մեր երկիրը ձեռքից գնում է։ Այդ անձնուէր երիտասարդները բռնակալներին ընդդիմադրել սկսեցին։ Այսօր, Ռումելիի զինւորականութիւնը կատարելապէս միացած՝ մեր հայրենիքը վառող-քանդող, մեր սիրելի վաթանը օտարների ձեռքն անցնելու պատճառ եղող սարկահոգիներին մէկիկ մէկիկ մէջտեղից վերացնելու է աշխատում։ Ներկայ բռնաւոր, ստորաքարշ, հայրենիքի ու ազգի դաւաճան հանդիսացած կառավարութիւնը տապալելու և Աբդիւլ Համիդի փակած պարլամենտը նորից բաց անելու համար են ոտքի կանգնել։

Ժողովուրդները միմեանց, եղբայրը եղբօր կոտորել տալու լիրբ սովորութեան համաձայն, այս անամօթ կառավարութիւնը սկսեց ռէդիֆները ժողովել։

Հէ՜յ զինւորական եղբայրներ։

Այս ռէդիֆները, որ ձեր հրամանի ներքոյ են, կառավարութիւնը Ռումելի պիտի ղրկէ, որպէսզի կոտորել տայ այնտեղի ձեր անձնազոհ ու քաջարի ընկերները։

Արդարութի՛ւն պահանջեցէք. ազատութի՛ւն պահանջեցէք. հայրենիքը ցածհոգիների ձեռքից ազատելու համար՝ անամօթների կոկորդը պի՛նդ սեղմեցէք։

Պատգամաւորական ժողովի բացման համար այն արիւն թափելու պատրաստ մարտիկների—ձեր հերոս ընկերների, ձեր ազնիւ եղբայրների վրա զէնք բարձրացնելու համար արդեօք ձեր հոգին համաձա՞յն է։

Հայրենիքի իղձերը, ազգի լուսաւորութիւնը պաշտպանող ազգի այս զաւակների վրա սուր շարժելու համար, արդեօք, ձեր խիղճը հանգի՞ստ է։

Ո՛չ, ո՛չ-հազար անգամ։ Ընդհակառակն այն քաջերի հետ մէկ սիրտ, մէկ հոգի լինելու և ձեռք ձեռքի տուած, ընդհանուր թշնամու, ներկայ ստորաքարշ կառավարութեան վրա յարձակվելու՝ մենք կատարելապէս վստահ ենք։

Հէ՜յ ռէդիֆ եղբայրներ։

Դուք դուրս էք հանվում ձեր Անատօլիայից—ձեր երկրից, ձեր տան ու տեղից, գիտէ՞ք ինչու, որպէսզի գնաք, կոտորէք ձեր Ռումելիի եղբայրները։

Չար, աւազակ, անամօթ, ոճրագործ կառավարութիւնը ցանկանում է ձեր փամփուշտներով, ձեր թրերով կոտորել ձեր այնտեղի եղբայրները։

Զգո՛յշ, այդպիսի դատապարտելի մի գործ թոյլ չը տաք ձեզ։ Անամօթ կառավարութիւն՝ որ ձեր ձեռքով կոտորել է ուզում այն երիտասարդներին, որոնք աշխատում են միմիայն ձեր վիճակի բարւոքման համար, չարչարվում են ձեզ համար, իրանց արիւնն են թափում ձեզ համար, կռւում են՝ ապահովելու համար ձեր անբռնաբարելի իրաւունքները։

Միացէ՛ք ուրեմն այս ջիւանների հետ և ձեր զէնքերը դարձրէք ձեզ կողոպտողների, ձեր երկիրը օտարներին ծախող լիրբ կառավարութեան դէմ։

Հէ՜յ ժողովուրդ։

Ժամանակը հասաւ։ Ահա Ռումելիի մեր զինւորական եղբայրները—այդ աչքի լոյս երիտասարդները—հայրենիքի ազատութեան համար առաջին քայլն արին ու բաւական էլ առաջ գնացին։ Ուշք դարձրէք դրանց։ Օգնեցէք դրանց ըստ ձեր կարողութեան։ Գիտցէ՛ք, որ իրաւունքը նրանց կողմն է։

Դէն, առա՜ջ, մարշ...

Կեցցէ ազատութիւնը, կեցցէ զինւորականութիւնը, կեցցէ ազգը, կեցցէ զօրքը, կեցցէ արդարութիւնը, կորչեն բռնակալները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պ. Վահէն չէր համաձայնել իմ տուած մեկնութեան հետ, որ տպված էր «Մշակի» № 157-ում և ի զուր ջանքեր է գործ դնում «Զանգակի» յուլիսի 23-ի համարի մէջ հերքելու ասածներս։

Այսպիսի պարագայի մէջ լուրջ մարդիկ չեն դիմում հեգնութիւնների և ոչ էլ պատէպատ միջոցների։

Ներսիսեան դպրոցի, այսպէս և մեր միւս թեմական դպրոցների հոգաբարձուներն ընտրվեցին ամբողջ թեմի պատգամաւորներից, ինչպէս պահանջում են Փոխարքայի տուած կանոնները։ Հոգաբարձուների կէսը 2 տարուց յետոյ վիճակով թողնում է պաշտօնը հեռանում, և նոր ընտրութիւն է կատարվում։ Այս պահանջն անում են Փոխարքայի տուած կանոնները։ Մատթէոս կաթողիկոսի կանոնները չունեն այդպիսի պահանջ։ Երբ այս նոր պահանջը այսօր պիտի կատարվի—կը նշանակի նոր կանոններն են կիրարկվում։ Մնում է մեզ պարզել մի շատ ինքնին պարզ խնդիր. վիճակով հեռացող 6 հոգաբարձուների տեղ նոր 6 հոգաբարձու ովքե՞ր պիտի ընտրեն. հին պատգամաւորնե՞րը թէ նոր պատգամաւորներ պիտի ընտրվեն։ Այս հարցի պատասխանը տալիս է նոր կանոնների հոգին—նպատակը։

— Ինչո՞ւ 2 տարուց յետոյ հոգաբարձութեան կէսը 4 տարի ժամանակամիջոցը չը լրացրած՝ թողնում հեռանում է պաշտօնից։

— Որպէսզի թէ միջոց տրվի ժողովրդին նոր թարմ ույժեր մտցնելու հոգաբարձական կազմի մէջ և թէ երկու տարէնը մի անգամ, փոխանակ առաջվայ 4 տարվայ, ժողովուրդը իր պատգամաւորների միջոցով ծանօթանայ իր թեմական կարևորագոյն հաստատութեան կացութեան, ընթացքի ու հաշիւների հետ։

Իսկական ժողովրդավարական սկզբունքների անկեղծ կուսակիցները չեն վիճի, որ ժողովրդի ստուգատեսութիւնը որքան յաճախ լինի, այնքան լաւ է. հետևապէս 4 տարէնը մի անգամի փոխանակ 2 տարէնը մի անգամը շատ աւելի լաւ է։

— Բայց ինչի՞ց է երևում, որ 2 տարէնը մի անգամ նոր ընտրված պատգամաւորները պիտի գան նոր ընտրութիւններ անելու, այլ ոչ նոյն հին պատգամաւորները։

— Այն պարզ հաւանականութիւնից, որ հին պատգամաւորները նոր հոգաբարձուներ, նոր—թարմ ույժեր չեն տայ, այլ կը գան իրանց առաջվայ ընտրածներին նորից կընտրեն, որով ընտրութեան գործողութիւնը միայն կրկնված կը լինի, բայց արդիւնքը նոյնը մնացած։ Համաձայնեցէք, որ դրա համար չարժէր վիճակով հեռանալ, թեմական հին պատգամաւորներին նորից ժողով կանչել։

Մեզ կասեն՝ հոգաբարձական պաշտօնից հեռացող անդամները վերընտրելի են. ուրեմն ինչ կայ որ հին պատգամաւորները գան և հէնց նրանց՝ հեռացողների գործունէութիւնը արդիւնաւոր գտնելով՝ վերընտրեն։

— Այն կայ, որ մի պատգամաւորական կազմից ընտրվածների գործունէութիւնը նոյն կազմի կողմից չէ, որ պիտի քննադատվի, այլ մի նոր կազմի կողմից։ Սա ահագին նշանակութիւն ունի։ Այն կայ, որ միևնոյն պատգամաւորական կազմը, եթէ գայ և վերընտրի վիճակով դուրս գնացածներին—այդ չի լինի գնահատութիւն, այլ կը լինի մի տեսակ խնամութիւն, այն ինչ նոր պատգամաւորական կազմի կողմից վերընտրվելը—այո, իսկապէս կը լինի գնահատութիւն ու արժանիքի վկայութիւն։

Այո, կրկնում եմ Մատթէոս կաթողիկոսի կանոններով ինչպէս հոգաբարձուների ամբողջ կազմի գործառնութեան շրջանն էր 4 տարով, այնպէս էր և նրանց ընտրող պատգամաւորներինը։ Բայց երբ գալիս են նոր կանոնները, որոնք սահմանում են հոգաբարձական կէսի ամեն 2 տարէնը մի անգամ նոր ընտրութիւն—շատ պարզ է, որ պատգամաւորական ժողովը նոր ընտրված պիտի լինի, որովհետև նոր կանոններով սկզբում մի անգամ միայն պատգամաւորները 12 հոգի են ընտրում, այնուհետև այլ ևս 12 հոգու ընտրութիւն չը կայ ու չը կայ, այլ կայ ու կայ միայն ամեն 2 տարէնը մի անգամ 6 նոր հոգաբարձուի ընտրութիւն։ Այսպէս և նոր կանոններով, սկզբում մի անգամ միայն 12 հոգաբարձուներից 6 հոգի վիճակով հեռանում են պաշտօնից, այնուհետև այլ ևս վիճակով հեռանալ չը կայ ու չը կայ, այլ կայ ու կայ 2 տարէնը մի անգամ 6 հոգու ընտրութիւն։

Ուրեմն եթէ՝ իբրև մի անգամ միայն կատարվող պարագայ վերցնենք մի կողմ դնենք 12 հոգու մի անգամից ընտրութիւնը և 6 հոգուն մի անգամից վիճակով հեռանալը—մնացածն ու սովորականը կը մնայ՝ իւրաքանչիւր երկու տարէնը մի անգամ վեց նոր հոգաբարձուի ընտրութիւն նոր պատգամաւորների ձեռքով. այսինքն այն, ինչ որ նոր կանոնների հիմնական նպատակն է և միակ պահանջը։ Հետևապէս շեշտում եմ, եթէ հաշւի չառնենք սկզբում 12 հոգաբարձուի մի անգամից ընտրութիւնը և յետոյ 6 հոգաբարձուի մի անգամից վիճակով հեռանալը, կը ստանանք իբրև հիմնական կանոն՝ 2 տարէնը մի անգամ 6 նոր հոգաբարձուի նոր ընտրութիւն՝ նոր պատգամաւորների ձեռքով։

Ամեն անգամ երբ 2 տարէնը մի անգամ թեմական պատգամաւորական ժողով կազմվի, այս ժողովի առաջ կայ 12 հոգաբարձուների գործունէութեան հաշւետուութիւն, որոնցից 6 հոգին՝ կազմի կէսը՝ իբրև չորս տարին լրացրածներ՝ դուրս են գնում, մնացած 6 հոգին՝ կազմի միւս կէսը՝ 2 տարվայ գործիչներ են հանդիսանում այս նորակազմ պատգամաւորական ժողովի առաջ։

Եւ այսպէս՝ Փոխարքայի նոր տուած կանոնները միայն սկզբում, իբրև բացառութիւն, 12 հոգու ընտրութիւն են կատարում և 2 տարուց յետոյ դարձեալ իբրև բացառութիւն 6 հոգի վիճակով դուրս են հանում, այնուհետև կանոնները մտնում են իրանց ուղիղ և անշեղ ընթացքի մէջ՝ ամեն 2 տարէնը մի անգամ թեմի կողմից պատգամաւորներ են ընտրվում և սրանք 6 հոգաբարձու են ընտրում։

Հասկացա՞ք, պ. Վահէ, այժմ. համոզվեցէ՞ք, որ ձեր փէշակն է կանոնները կարդալ և քմահաճ մեկնութիւններ տալ, ձեր փէշակն է ձեր քիմքի և ցանկութիւնների համապատասխան յօդուածներ ճռաքաղել մէկը Փոխարքայի կանոններից, միւսը Մատթէոս կաթողիկոսի, նայած թէ որն է ձեռնտու։ Դուք ինքներդ շատ լաւ գիտէք, որ նոր կանոնները միայն Ներսիսեան դպրոցի համար չէին, այլ բոլոր մեր թեմական դպրոցների, հետևապէս միանգամայն անտեղի է Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձուների թիւ ու ժամանակամիջոցի հետ կապել ներկայ խնդիրը։

Մեսրոպ ա. ք. Մելեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Կովկասեան զինւորական-նահանգական դատարանին է յանձնված Գանձակի յաջորդ Կորիւն վարդապետը, որ մեղադրվում է այն բանում, թէ 1905 թ. Գանձակ քաղաքում մտաւ «Հայկական ռայօնական Դաշնակցութիւն» կոչված համախմբութեան մէջ, որ կանխապէս նպատակ է դրել իր համար տապալել պետական ներկայ կարգը։

Գործը շարադրված է քրէական պատժագրքի 102-րդ յօդուածով։

Այս գործը քննելու է զինւ. դատարանի նստաշրջանը Գանձակում, ուր մեղադրեալն է գտնվում ոստիկանական հսկողութեան տակ։

—

Զինւորական գլխաւոր դատարանը անհետևանք է թողել Գանձակի գաւառի Բաղա գիւղացի Ա. Խաչատրեանի վճռաբեկ բողոքագիրը։ Ինչպէս գիտեն ընթերցողները, Գանձակում զինւորական նահ. դատարանը Խաչատրեանին մահվան դատապարտեց Գանձակի գաւառապետ Ավալիանու սպանութեան համար։

—

Սէվաստօպօլում կախաղան են բարձրացրել երկաթուղային զրահատարին սպանող Գօգուլաձէին, Իւժէգաշվիլու և Կիլբակիանուն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօրվանից սկսում ենք հրատարակել մեր սեփական թղթակցի նամակները Կ. Պօլսից։ Այսօրվայ նամակը վերաբերում է ընդհանուր տպաւորութիւններին։ Վաղը կը զետեղենք նրա նամակը Դուրեանի և Օրմանեանի մասին։

◆ Այսօրվանից Զուբալօվի տանը կը սկսվեն ձրիաբար կովկասեան բժշկական ընկերութեան բժիշկների մասնաժողովի հակախօլերական սրսկումները։ Սրսկումներ կը կատարվեն երեքշաբթի և շաբաթ օրերը, ցերեկվայ ժամը 12-ից մինչև 2-ը։

◆ Թիֆլիսի նահանգապետը վճռականապէս հերքում է «Голосъ Кавказа» լրագրի № 648 ում տպված ստայօդ տեղեկութիւնը այն մասին, որ իբր նա պատժել է պաշտօնեայ Բարսեղեանին, որովհետև Գլդանի գիւղում ոչ մի պաշտօնեայի ոչ երեսին, ոչ էլ մարմնի որևէ տեղին նա չէ հարուածել։

◆ Թիֆլիս է եկել Մոսկվայի գիւղատնտեսական ինստիտուտի էքսկուրսանտների մի խումբ։ Քաղաքային վարչութիւնը էքսկուրսանտներին յատկացրել է Զուբալօվի ժողովրդական տան շինութիւնը։

◆ Վրաց էկզարխութեան ուղղափառ եկեղեցական դպրոցների պահպանութեան համար անդրկովկասեան հողային տուրքի գումարներից նշանակված է 17,300 րուբլի նպաստ։

◆ Մոսկվայի Ժամհարեան եղբայրների բանկային տունը, որի մէջ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը գրաւ է դրել քաղաքային օբլիգացիաները 300,000 րուբլով 9 տոկոսով, հաղորդել է քաղաքային վարչութեան, որ նա պատրաստ է ընդառաջ գնալ քաղաքին և պակասեցնել իր ստացած տոկոսը, միայն այն պայմանով, եթէ քաղաքը հանգցնէ փոխառութեան մի մասը, թէկուզ 50 հազար րուբլու չափ։

◆ Մօտ օրերս արտասահմանից Թիֆլիս է գալու Կովկասի լեռների և բարբառների յայտնի գիտնական դօկտ. Դիրրը, որ այստեղ կը շարունակէ իր պարապմունքները ուսումնասիրելու Կովկասը։ Նա ի միջի այլոց հրաւիրված է դասախօսութիւններ կարդալու կովկասագիտական բարձր դասընթացներում համեմատական լեզուաբանութեան մասին։

◆ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդութիւնը՝ յանձնելու Թիֆլիս քաղաքի տնօրէնութեան Մուշտայիդ այգու պետական գանձատանը պատկանեալ մասը, որ միակ զբօսատեղին է քաղաքի 200,000 բնակչութեան համար, նահանգապետը հաղորդել է քաղաքագլխին, որ երկրագործութեան վարչութիւնը, համաձայն երկրագործ. գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօր Մէզվէդիէվի կարծիքի, «միանգամայն անհնար է գտնում ներկայումս յանձնել քաղաքին Մուշտայիդ այգին, և յամենայն դէպս յանձնելու խնդիրը կը յետաձգվի մինչև բուսաբան. այգու տօնելի վերջանալը»։

◆ Յուլիս 31-ից իբր ույժի մէջ մտաւ նահանգապետից հաստատված մսի նոր սակագինը, որի համաձայն տաւարի մսի փունտն արժէ 11 կ., ոչխարինը 13 կոպ., գոմէշի մսի փունտը—10 կոպ.։ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդրում է բնակիչներին սակագինը խախտելու իւրաքանչիւր դէպքի մասին հաղորդել առևտրա-տնտեսական մարմնին արձանագրութիւններ կազմելու համար։

◆ Սօլօլակի աշխատանքներն աւարտման մօտ են։ Նորագիւտ աղբիւրի ջուրն օրեւոր աւելանում է։ Կրկին մնում է փորելու ընդամենը 30 սաժէն։ Հաւանօրէն բոլոր աշխատանքները կը վերջանան նոյեմբերի սկզբին։

◆ Թիֆլիսի էլէկտրաքարշի անօնիմ ընկերութիւնը արտասահմանից բերել է տալիս կրկին տասը նոր մեծ վագոններ։

◆ Քաղաքային տուրքերը ժողովելու աւելի խանդոտ միջոցներ ձեռք առնելու շնորհիւ, քաղաքի եկամուտները անցեալ կիսամեակին ծախսերից անցան 50 հազար րուբլով։

◆ Ստացանք «Հասկերի» մանկավարժական գրադարանի XVI գիրքը. Ռուդօլֆ Լէման «Ժառանգականութիւն և դաստիարակութիւն», գինն է 15 կոպ., թարգմ. գերմաներէնից։

◆ Ստացանք Տ. Զաւէնի կազմած «Թիւրք սահմանադրութիւնը և երիտասարդ թիւրք կուսակցութիւնները» գրքոյկը, 64 էջ, գինն է 20 կոպէկ։

◆ Որովհետև քաղաքային աճուրդասրահը վնասից աւել օգուտ չէ տալիս քաղաքին, հարց է յարուցված ընդմիշտ փակել այդ հաստատութիւնը։

◆ Յուլիս ամսվայ ընթացքում Թիֆլիսի բուսաբանական այգին այցելել են 6000 վճարովի այցելուներ, չը հաշւած երեխաներին և ուսանողներին։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ ԵՒ ՏԵՍՈՒՉ Տ. ԱՂԱՄԱԼԵԱՆԸ

(Նամակ խմբագրութեան)

1

Երևան, 19 յուլիսի

Գլորվեց մի կերպով Երևանի թեմ. դպրոցի 1907/8 ուսում. տարեշրջանը։ Գլորվեց, բայց վա՜յ էն գլորվելուն։

Դպրոցի հոգաբարձութիւնը երկար վիճաբանութիւնից յետոյ, ձայնից բազմութեամբ եկաւ այն եզրակացութեան, որ տեսուչ Տ. Աղամալեանին պիտի պահել։ Որ նա, գործունեայ, պիտանի և աչալուրջ տեսուչ է (?), որ նա հետևող է դպրոցի առաջադիմութեան և կարգ ու կանոնին...

Այս որոշումից ցնցվեց աշակերտութիւնը, ցնցվեց և հասարակութեան բանիմաց մասը։ Ահա այդ էր պատճառը, որ դպրոցի և հասարակութեան շահն աչքի առաջ ունենալով, ստիպված ենք պարզել այն բոլորը, ինչ որ անհասկանալի մնաց հոգաբարձութեան մեծամասնութեանը։

Հոգաբարձութիւնը փոխանակ ուղղելու իր սխալը և արձակելու տեսուչ Տ. Աղամալեանին իբրև անփորձ և իր վարչական անընդունակութեամբ մի տեսակ մարդու, ընդհակառակն Երևանի հասարակութեան մէջ առատօրէն սփռեց գովասանքի մի տարափ և կրկին պահեց նրան։

Ասում են, որ տեսուչ Տ. Աղամալեանցը աւարտել է լէյնոյ ինստիտուտը, և եզրակացնում են, ուրեմն նա ընդունակ, մանկավարժ և վարչական մարդ կը լինի։

Հոգաբարձութիւնը Տիգ. Աղամալեանին տեսչութեան պաշտօնի համար առաջարկելիս և նրա հաստատութիւնը խնդրելիս, ի միջի այլոց, գրում է՝ «վկայականը այրված է»։ Կարող է լինել, թէև շատ կասկածելի է։ Եթէ իրաւ այրված է, կարծում ենք, որ շատ հեշտութեամբ կարելի էր պատճէնը ձեռք բերել, քանի որ 9 ամիս ժամանակ կար։

Իմ կարծիքով Թեմ. դպրոցի տեսուչը պիտի լինի կամ հմուտ մանկավարժ, կամ պատմաբան, կամ լեզուագէտ, և որքան ինձ յայտնի է, դրանցից միանգամայն զուրկ է Աղամալեանը՝ Եթէ այդպէս է, կրկին հարց է առաջ գալի, ուրեմն ի՞ր մանկավարժական ընդունակութեան կամ մանկավարժական ասպարիզում ցոյց տուած գործունէութեան համար է այդ պարոնը արժանանում վերընտրութեան։

Գ. Աղամալեանը ստանում էր 2550 ր. ռոճիկ, որը, պիտի ասել, բաւականին պատկառելի գումար է։ Նա աւանդում էր բնագիտութիւն և բնական պատմութիւն։ Դասին ստանում էր 70 ր. իբրև մասնագէտ համալսարանական, այն ինչ ցածր դասարանների դասերը կարելի էր տալ մի այլ ուսուցչի 40-ով և այդպիսով աղքատիկ և պարտքի մէջ խրված դպրոցը ազատել ծանր բեռից։

Հարց ենք տալիս այդ «գործունեայ» տեսչին. ինչ էր պատճառը, որ սոյն ուսումնական թւի սկզբին դպր. ուսուցիչ Ռ. Աբրահամեանը հրաժարվեց դասերից և թողեց ու գնաց։ Ի՞նչ միջոցներ էր ձեռք առնում այդ փորձված տեսուչը, երբ վերակացուները նրան միշտ ձանձրացնում էին իրանց բողոքներով, թէ դասամիջոցներին դասարաններում աշակերտները այնքան ծխում են, որ պարապել չէ կարելի։ Ի՞նչ բարոյական ազդեցութիւն ունեցաւ պ. Աղամալեանը աշակերտների վրա, երբ աշակերտները համալսարանական կարծեցեալ ուսուցիչներին քանիցս դուրս էին անում դասարանից... Ի՞նչ էր պատճառը, երբ այդ համալսարանական ուսուցիչները դասերը թողնում դասարանից դուրս էին գալիս, և այլն և այլն։

Հետաքրքրական է իմանալ այդ՝ հմուտ և գործունեայ տեսուչը ո՞րտեղ էր լինում, ի՞նչ էր անում և ի՞նչ բարոյական ուղղիչ ազդեցութիւն ունեցաւ ամբողջ ուսումնական տարվայ մէջ ուսուցիչների և աշակերտների վրա և ի՞նչ միջոցներ ձեռք առաւ դպրոցում անցած հակամանկավարժական դէպքերի առաջն առնելու համար։

Այս բոլորից յետոյ կարծեօք պարզ է, թէ ինչ էր դպրոցի առաջադիմութեան արդիւնքը։

Բարձր դասարանների աշակերտները տեսնելով, որ դպրանոցի ամեն կարգ ու կանոնը խանգարվում է, քանիցս բերանացի և վերջում գրաւոր կերպով դիմում են տեսչին և մինչև անգամ, եթէ չեմ սխալվում, հոգաբարձութեանը, թոյլ տալ իրանց ներկայանալ մանկավարժական ժողովին և պարզել ամեն բան, բայց այդ բոլորը մնում է «ձայն բարբառոյ յանապատի»։ Վերջապէս աշակերտները տեսնում են, որ արագութեամբ քայքայվում է դպրանոցի կեանքը, ներս են խուժում տեսչանոց, ուր պատահմամբ լինում է հոգաբարձուներից մէկը և հոգ. քարտուղարը,—պատմում են իրանց ցաւերը։

Կրկին ստիպված ենք հարց տալ փորձված տեսչին. ինչու համար հրաժարվեցին ուս. Տէր-Մինասեանը և Թադէոսեանը. հետաքրքրական է իմանալ իսկական պատճառը։

Ինչու մանկավարժական ժողովը միաձայն որոշեց ուս. Մեժլումեանին, և այլն և այլն։ Ահա հետաքրքրական հարցեր, որոնց պատասխանը սպասում ենք «փորձված մանկավարժ» տեսչից։

Վերջապէս ուսում. տարին գլորվում է և հասնում իր վախճանին։ Մանաւորապէս տեսչին քանիցս յայտնելուց և սպասելուց յետոյ, մանկավ. ժող. գերմանական լեզուի ուսուցիչը ցաւօք սրտի յայտնում է, թէ հինգերորդ դասարանի աշակերտներից միայն չորսը դասագիրք ունեն, իսկ միւսները չեն կամենում գնել, ինչ անել...

Ինչ անե՞լ։ Ոչինչ։ Ուսումնական տարին վերջացել է, ընդամենը մի քանի օր է մնում, ուրեմն և աւելորդ է։

Ահա թէ ինչ ձևով էր ընթանում ուսումը տես. Աղամալեանի ժամանակ։

Այդ ամենից յետոյ խորհուրդ ենք տալիս ձեզ, բարեխիղճ քաղաքացիք և սրտացաւ ծնողներ, հետաքրքրվեցէք, որովհետև ապագայ սերունդն է կրթվում այնտեղ։ Գնացէք՝ կարդացէք հմուտ տեսչի ժամանակվայ մանկավարժական ժողովների արձանագրութիւնները, որովհետև ձեր որդիքն են սովորում այդ հիմնարկութեան մէջ և տեսէք՝ քանի՛ մանկավարժական հարցերով է զբաղեցրել ուսուցչական ժողովները։

Իսկ «փորձված» տեսուչ Աղամալեանին կրկին կը մնայ փորձվելու Երևանի Թեմ. դպրանոցում, ուր նա ունի ուժեղ դաշնակիցներ։

Բայց... «վա՜յ քեզ քաղաք, դի թագաւոր քո մանուկ է»։

Ս. Սմբատեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

„Бирж. Вѣд." թերթի սեփական թղթակիցը Սալօնիկից վերոգրեալ վերնագրի տակ մի շատ հետաքրքրական ու մանրամասն թղթակցութիւն է ուղարկել, այնտեղ կատարված դէպքերի մասին, որի հետ կարևոր ենք համարում ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին։

Այն ժամանակ,—գրում է ականատես թղթակիցը,—երբ Մօնաստիրում, Սերէսում, Ուսկիւբում և նահանգի մի քանի այլ կէտերում երիտասարդ-Թիւրքերի ղեկավարութեամբ ապստամբած զօրքերը սահմանադրութիւն յայտարարեցին, Սալօնիկը դեռ շարունակում էր իր սովորական կեանքով ապրել։ Բայց տրամադրութիւնը ոգևորված էր և զգացվում էր, թէ այսօր կամ վաղը կեանքը կը սկսի նոր հոսանք ընդունել։

Յանկարծ, յուլիսի 10-ին, երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտը, նախազգուշացնելով ոստիկանութեանը՝ մահվան սպառնալիքով՝ ոչ մի բանի չը խառնվել, սկսեց քաղաքի պատերին պրօկլամացիաներ կպցնել։ Ոստիկանական մի յանդուգն պաշտօնեայ ուզեց պոկել պրօկլամացիան գլխաւոր փողոցի վրա, բայց տեղն ու տեղը սպանվեց։

Ժամը 2-ին մօտ, փողոցում օֆիցերները երևացին կառքերում նստած, որոնք անց ու դարձ անելով ժողովրդին հրաւիրում էին հրապարակի վրա գալ։ Երբ հասարակութիւնը հաւաքվեց, Օլիմպօս հիւրանոցի պատշգամբի վրա դուրս եկան երիտասարդ-Թիւրքերի կուսակցութեան անդամները և սկսեցին խօսել ժողովրդային ներկայացուցչութիւն հաստատելու մասին, ինչպէս և այն մասին, թէ պէտք է բոլոր ազգութիւններին օսմանեան դրօշակի տակ միացնել, որպէսզի աւելի աջողութեամբ կարելի լինի կռւել կառավարութեան դէմ։

Ճառերը վերջանում էին հետևեալ խօսքերով. «Եթէ մեզ չը տան մեր ուզածը, այն ժամանակ մենք ոյժով կը վերցնենք և, ինչ էլ որ լինի, անպատճառ կը փոխենք բոլորի համար ատելի կառավարչական ձևը։ Փառք Աստուծոյ, մեր յեղափոխութիւնը առանց արիւնհեղութեան է. բայց եթէ մեզ արգելք հանդիսանան, մենք պատրաստ ենք ամեն բան անելու։ Կեցցէ հայրենիքը, ազգը և ազատութիւնը։ Կեցցէ բանակը, որի շնորհով մեր ջանքերը աջողութեամբ կը պսակվեն»։

Օֆիցերները շրջապատեցին հռետորներին և համբուրվում էին նրանց հետ։ Ժողովուրդը բուռն կերպով ծափահարում էր և իր հրճուանքն էր յայտնում երիտասարդ-Թիւրքերին ու զօրքին։

Հանդիման գտնվող մի ուրիշ հիւրանոցի պատշգամբի վրա էլ հռետորներ հաւաքվեցին, որոնք իրանց ճառերով բորբոքում էին ժողովրդին։

Յանկարծ ամբոխի մէջ երևաց հետևակ զօրքի մի կապիտան և արագ քայլերով անցաւ ամբոխի միջով, շուրջը տպագրված պրօկլամացիաներ շաղ տալով։ Առանձին խմբակներ կազմվեցին, սկսեցին կարդալ թերթիկները, որոնց մէջ տպագրված էր հետևեալը.

«Ընկերներ. բարի լուր կայ։

«Մենք, վերջապէս, ազատվում ենք 7—10 հոգու գիշատիչ ճանկերից, որոնք 32 տարի պոկում ու խլում էին մեր սիրելի հայրենիքից շատ մասեր և արիւնով էին ներկում այն, ինչ որ մեզ մնացել էր։ Այդ մարդիկը 32 տարի կառավարում էին 35 միլիօն ժողովրդին, իբրև ոչխարների մի հօտ, ծածկելով նրանցից մարդասիրութեան իմաստը. Նրանք վայր էին գցում մեր ազգային պրեստիժը, թշնամանք էին սերմանում ազգութիւնների մէջ և եղբօրը գրգռում էին եղբօր դէմ։ Նրանք մեզ ոչնչացնում էին, ոմանց բանտերում՝ շղթայակապ, ոմանց էլ աքսորում։ Նրանք վատ էին գործադրում զինուորի զէնքը, անբարոյականացնում էին պաշտօնեաներին, սնանկութեան հասցնում մեր հարուստներին, կողոպտում էին աղքատներին։ Նրանք աշխատում էին 32 տարվայ ընթացքում երկիրը կառավարել ստութեամբ և վախկոտութեամբ։ Աստուծոյ կարողութեամբ «միութեան և առաջադիմութեան օսմանեան կօմիտէտը» հայրենիքի բոլոր եղբայրներին հաւաքեց միութեան և սիրոյ դրօշակի տակ. Նա ստիպեց մարդկանց սիրել միմեանց։ Բոլորն էլ անկեղծ սրտից աշխատում են ազատվել գազիր մարդկանց ձեռքերից։ Այսուհետև բոլորն էլ ազատ կը լինեն, բոլորն էլ երջանիկ և ուրախ կը լինեն։ Բայց որպէսզի կատարելապէս աջողութիւն ունենանք, կօմիտէտը պէտք է ձեզ խորհուրդ տայ. մազաչափ անգամ մի հեռացէք պատասխանատուութիւնից և արդարութիւնից. Թող ոչ ոք չը վնասի ուրիշների գոյքին, պատւին ու կեանքին, Թող ամենքն էլ յարգեն ու ձգտեն պաշտպանելու մանաւանդ մեր բարեկամ և մեր երկրում բնակվող օտարերկրացիների կեանքը, պատիւն ու ունեցվածքը. Նրանք պէտք է մեր հովանու տակ գտնվեն։ Հարկաւոր է, որ մեր և համաշխարհային պատմութեան մէջ յաւիտենական փառաւոր յիշատակ թողնենք, իսկ դրա համար հարկաւոր է, որ մենք աշխատենք պարտաւոր կերպով, սիրով և կատարեալ կարգ ու կանոնով՝ նպատակ ունենալով միմիայն մեր հայրենիքի փրկութիւնը։ Մազաչափ անգամ մի շեղվէք այն հրահանգներից, որ ձեզ կը տայ կոմիտէտը յատուկ միջոցներով։ Իմացած եղէք, որ շատ խիստ կերպով կը պատժվին այն ամենքը, որոնք կոմիտէտի խորհուրդների ու հրահանգների հակառակ կը գործեն, որովհետև օսմանեան պատիւը կարելի է պահպանել միմիայն աղնիւ և բարեխիղճ վարմունքով։ Ձեզնից հայրենիքը միմիայն այդ է պահանջում»։

«Կեցցէ հայրենիքը! Կեցցէ ազգը! Կեցցէ ազատութիւնը!»

Մի ընդհանուր աղմուկ էր բարձրացել,—շարունակում է թղթակիցը,—համակրութիւն արտայայտող բացագանչութիւններից և ծափահարութիւններից։

Ոստիկանութիւնը շշկլված շրջում էր ամբոխի մէջ, դիտում էր բոլորը, բայց ոչ մի բանի չէր խառնվում։

Կարգը օրինակելի էր։

Ժողովուրդը խմբերով խռնվում էր ճառերի տեղը։ Սկսեցին ծերունի պահեստի զօրքերը մտնել, որ այդ առաւօտ եկել էին նաւով Անատօլիայից։ Նրանք բոլորովին ոչինչ չէին հասկանում, թէ ինչ է կատարվում, և հարցնում էին ամբոխից, թէ բանը ինչումն է։ Այդ միջոցին ծովի մօտ առանձին խմբով կանգնած մօրուքաւոր ռեզերվիստներին մօտեցաւ մի օֆիցեր և սկսեց նրանց բացատրել օրվայ դէպքերը ստիպելով նրանց բացագանչել. «Կեցցեն հայրենիքը, ազգը և ազատութիւնը!»

Երբ նա վերջացրեց, ես մօտեցայ այդ խմբին ու հարցրի, թէ արդեօք նրանք հասկացա՞ն օֆիցերի ճառը։ Նրանք շուարած պատասխանեցին, որ ոչինչ չեն հասկանում. բայց այդ միջոցին ինձ մօտեցաւ մի սիվիլ հագնված պարոն, որը, ինչպէս իմացայ, հագուստը փոխած մի օֆիցեր էր նոյնպէս և երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտի անդամ, ու ժպտալով ասաց ինձ. «Դրանց զօրանոցներում կը բացատրեն այդ բոլորը և հաւատացէք, որ վաղը նրանք բոլորն էլ հիանալի կերպով կիմանան ամեն բան, թէ ինչ է կատարվում և թէ ինչ պիտի անեն իրանք»։

Երիտասարդ-Թիւրքերի կօմիտէի յետագայ ծրագիրը հետևեալն էր. միւս օրը միտինգ գումարել «Բիազ-Կուլէում», յետոյ գնալ մզկիթ աղօթելու և ստիպել իշխանութիւններին երդվել սահմանադրութեանը»։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԻՑ

(Սեփ. թղթ.)

Կահիրէ, 12/25 յուլիս

Կաթողիկոսական խնդիրը միայն Կովկասը չէ որ կը յուզէ, արտասահման ալ այդ առթիւ բաւական մելան կը հոսեցնէ և թուղթ կը մրոտէ։

Թիւրքահայ թեմերուն ժամանակցութեան պաշտօնական հրաւիրագրերը Էջմիածնէն ճամբայ դրուած են, կըսուի, և օր մը պիտի հասնին անշուշտ։ Ճիշտ այդ մտածումով ալ Օրմանեան սրբազան իր գործի մարդու փութկոտութեամբ, անոնց հասնելէն առաջ Թիւրքիայի քառասունևհինգ թեմերուն՝ ընդ որս և Եգիպտոս՝ ընտրական հրահանգները ղրկելով, հրամայած է փութով սկսիլ և վերջացնել աշխարհական պատուիրակներուն ընտրութիւնը։

Դանդաղկոտութեան դասական երկրէն Օրմանեան սրբազանին այս փութկոտութիւնը իր մասնաւոր հաշիւը և նպատակը ունի։ Եթէ ոչ կաթողիկոսական ընտրութեան չափ իրեն համար կարևոր, սակայն ոչ նուազ շահեկան և անհրաժեշտօրէն անյետաձգելի խնդիրներու շարքը, ահա, տարիներէ ի վեր պատրիարքարանի կանաչ սեղանին վրայ դէզը կաւելցունեն, օրը օրի իրենց չվճռուած լուծումը տեսնելու յոյսովը երազելու...

Կաթողիկոսական ընտրութեան հարցը՝ հակառակ մեզ կարգ մը անդրազգային, ընկերվար և դեռ չգիտեմ ինչպէս յորջորջուող նոր, լուսամիտ և ազատական երիտասարդութեան և կուսակցութիւններուն առերևոյթս անտարբերութեան՝ մեծապէս կը շահագրգռէ ամենքը։ Անշուշտ այդ ամենքը—ըլլայ հասարակութիւնը, ըլլայ այս ու այն կուսակցութիւնը, կազմակերպութիւնը—միայն շահն ու ակնկալութիւնը չեն սպասեր Հայրենի յաջորդէն, և ամենուն պէս տարագոյն ու խայտաբղէտ են պահանջները. այնուամենայնիւ շահագրգռութիւնը, որ կայ ներկայիս մէջ, ապացոյց մըն է, որ կաթողիկոսական իշխանութիւնը՝ հակառակ օտարային պոռչտուքներու և խարուսիկ հաւատումներուն՝ դեռ շատ հեռու է փտած և այլ ևս անժամանակ հաստատութիւն մը ըլլալէ, ու իր քաղաքական, ընկերական և կրօնական ազդեցութիւնը շատ բարձր է ժողովրդեան վրայ։ Իրեն թշնամիները կրնան զինք հայհոյել և վարկաբեկել, բայց ոչ արհամարհել։

Արդարև ժամանակի պահանջներուն գիտակ և ատակ կաթողիկոս մը մեծ ծառայութիւններ պիտի կրնայ մատուցանել մեզ, մեր ներկայ փշոտ, փոշոտ և քաոսային վիճակին մէջ, երբ արտաքին թշնամիներու դժուարութեանց հետ և կուշտը, նոյնքան և աւելի ներքին խոչընդոտներէ և նեղուցեցերէ կերուած, մաշուած կը հալինք, կը սպառինք կակուղ մոմի մը պէս։

Ժողովուրդը՝ որ բնազդաբար յաճախ ամենքէն աւելի աղէկ կըմբռնէ իր իսկական շահերը՝ կը զգայ նոյնպէս կաթողիկոսական ընտրութեան պէս խնդրի մը արտակարգ կարևորութիւնը։ Ասիկա այն գերագոյն առիթն է, որ մեր ժողովուրդը պիտի կըրնայ իր իսկ կամքով և գիտակցութեամբ որոշել և ընտրել զինք առաջնորդող ղեկավարը և անոր գործունէութեան ուզած ուղղութիւնը տալ։ Իր այս աւագ իրաւասութեան բարւոք գործադրութենէն կախում պիտի ունենան շատ մը բաներ, որոնց չունենալը և գէշ կերպով ունենալը զուր տեղ պիտի քննադատէ վերջէն, եթէ այժմ դանդաղ, անտարբեր և մէկուսի մնայ։

Ինչպէս ըսինք, թէև պատրիարքական հրահանգով Պոլսոյ ենթակայ թեմերու մէջ պատուիրակներու ընտրութեանց ձեռնարկուած է, բայց այս խնդիրը դեռ ջուր կարող է վերցնել։ Էջմիածնէն ճամբայ հանուած հրաւիրագիրը չափէն աւելի ուշացան իրենց պաշտօնական ուղեգծին կայաններուն մէջ կրնայ ըլլալ, որ չգան ալ։ Եւ յետոյ, չի գիտցուիր դեռ թէ Թիւրք կառավարութիւնը պիտի թոյլատրէ՞ պատգամաւորաց երթը, մանաւանդ երբ հակօրմանեան հոսանք մը օրուան համաճարակը դառնայ, ի նպաստ Իզմիրլեանին։ Եւ յետոյ, հրաման ալ ըլլայ, Թիւրքահայ թեմերը շատ մը պատճառներով՝ ընդ որս անապահովութիւնը և նիւթական չգոյութիւնը՝ տրամադիր պիտի ըլլա՞ն պատգամաւորներ ղրկելու։

Այս տեսեալ պայմաններուն մէջ Օրմանեան սրբազանին փութկոտութիւնը կը բացատրուի այն հանգամանքով, որ Պոլսոյ պատրիարքը դեռ պաշտօնական հրաւիրագիրը չհասած՝ թերևս նախապէս ապահով ըլլալ կուզէ ըլլալիք պատգամաւորական ընտրութեանց որակ-արդիւնքէն։ Եթէ ժամանակը իրեն անհամակիր տարրերէ բաղկանայ, իրեն համար դժուար պիտի չըլլայ կառավարութեան միջոցով արգիլել հրաւիրագրաց յանձնումը, — որով եղած ընտրութիւնքն ինքնին ջուրը կիյնան, առանց որ Օրմանեան ինքն անձնապէս ատոնց պատճառը եղած ըլլայ։

Եւ արդէն խօսքեր ալ կը լսուին, որ պատրիարքը մտադիր է Պոլսոյ կեդրոնական ընդհանուր ժողովը գումարել, անոր միջոցաւ յայտնելու ապագայ կաթողիկոսին համար Թիւրքահայերուն կամքը... Միւս [illegible] թէ ասկէ ուրիշ դժուարութիւն մը կը բըղխի։ Հարկ պիտի ըլլայ [illegible] կամ չըլլալ ընդհանուր երեսփոխանութիւնը գումարել տալ, իսկ ատիկա ողորմած-հոգի սահմանադրութիւնը յարութիւն առնել տալու պէս բան մը պիտի նշանակէ, որմէն մեծապէս կը զգուշանայ Թիւրք կառավարութիւնը և, նոյնիսկ, Օրմանեան ինքն ալ իր ներկայ ինքնագլուխ իշխանութենէն վերջ։

Այնուամենայնիւ, ինչ ալ ըլլան, ցանկալի է, որ հայոց հայրապետը ըստ կարի ազգին մեծամասն քուէով ընտրուի։ Եւ յետոյ կաթողիկոսական ընտրութեան չափ ուրիշ էական խնդիր մըն ալ կայ և նոյնիսկ անկէ աւելի կարևոր։ Կաթողիկոսական իշխանութեան քովը օրէնսդիր ժողովի մը կազմութեան հարցը, որ այլ ևս օրուան հրատապ պահանջն է, խնդիր մը, որ Հայրենիքն իսկ գործադրուէր պիտի, եթէ դաշնակցական ներկայացուցիչները՝ մեզ անբացատրելի պատճառներով անոր իրականացման արգելք չըլլային։

Այդ ամենուստ հաւաքուած պատգամաւորները ամենէն աւելի ի վիճակի են և լաւագոյն առիթը կը գտնեն հոն, Էջմիածնի մէջ, նախապատրաստական խորհրդակցութիւններով այդ ժողովին իրաւասութեան և գործունէութեան մասին ծրագիր կազմել և նոյնիսկ ապագայ կաթողիկոսին գործադրելու պայմանաւ հրահանգներ գծել։

Եգիպտոսի հայութիւնը, որ արտասահմանի մէջ Պոլսոյ ենթակայ միակ թեմն է, որ օրինական արտօնութիւն կը վայելէ իր զոյգ մը պատգամաւորները Էջմիածին ղրկելու, բնական է, որ անշահագրգիռ չի մնար այդ խնդրոյն։

Պատրիարքարանէն եկած ընտրական հրահանգը՝ երբ դեռ հրաւիրագրերու գալը պաշտօնապէս չիմացուեցաւ՝ հոս անակնկալ մը եղաւ։ Ուստի տեղիս երիտասարդութիւնը լսարան-ընթերցատան վարչութեան նախաձեռնութեամբ հասարակային ժողով մը ձեռնարկեց, ուր օրուայ բանախօս դոքթ. Տաղաւարեանէն զատ՝ ուրիշներ ևս իրաւունք պիտի ունենային թեր ու դէմ կարծիքներ յայտնելու և ի վերջոյ բանաձև մը քուէարկելով, աշխարհական պատգամաւորին ընտրութեան համար յաջորդ օրն իսկ գումարուելի Կահիրէ-Աղեքսանդրիոյ խառն գաւառական ժողովոյ պիտի մատուցուէր։

Ժողովը յաջող անցաւ և ամսոյս 18-ին գիշերը լսարան-ընթերցատան ընդարձակ սրահին մէջ բանաձև մը ընդունուեցաւ, որով ժողովրդեան միահամուռ փափագը ապագայ կաթողիկոսացու կը հռչակէր Իզմիրլեան սրբազանը։

Ժողովրդեան այս իղձը գովելի, բայց կիսատ, միւս օրն իսկ գաւառական ժողովին ներկայացուեցաւ։ Կիսատ ըսի, որովհետև բաւական չէր միմիայն Իզմիրլեան սրբազանը առաջին ընտրելին հռչակելը, քանի որ ըստ պօլօժէնիայի բ. ընտրելին նոյնպէս նոյնքան արժանի էր նկատողութեան առնելու։ Կամ աւելի պարզ խօսելով Օրմանեան սրբազանին անուան վտարման պարագան բանաձևին մէջ չգրուեցաւ ակամայ զանցառութեամբ մը և ատոր համար բաւական համարուեցաւ մամուլին մէջ պայքար մը։

Խնդրոյն այս վիճակին մէջ գաւառական ժողովը ի նիստ գումարուեցաւ ամսոյս 19-ին, կիրակի, յորում առաջին անգամ ըլլալով Աղեքսանդրիոյ նորընտիր երեսփոխանութիւնն ալ Կահիրէին հետ միասին կուգար, և ոչ միայն այդքանը, այլև խանդ ժողովին մէջ իրենց ուզածը քշելու ճարպիկութեամբ կտրուկ, արագ, բայց, աւելի ոչ նպատակայարմար որոշումի մը յանգեցան։

Խնդիրը պատգամաւորի շուրջը կը դառնար։ Ո՞վ պիտի տանէր եգիպտահայ իղձը, ձայնը Էջմիածնի Մայր Աթոռը։

Իրաւունք ունէինք յուսալու, որ մօտ 8—10,000 հայութիւն համրող գաղթականութեան մը մէջ այդ պաշտօնին յարմար ընտրելի մը գտնուէր։ Բայց այդպէս չէ եղեր, վա՜յ մեզ։ Աղեքսանդրիացիք ապացուցին զայդ, ու հարկ եղաւ դուրսերը, հեռուները, շա՛տ հեռուն փնտռել զանոնք։ Իզմիրլեանը ընտրելու հրահանգով աշխարհական պատգամաւորն ողջունեց Մինաս Չերազ։

Իսկ Մինաս Չերազը...։ Դեռ շատ ատեն չէ, որ «Մշակը» և կովկասեան ուրիշ թերթերը անոր կարծիքը հրատարակեցին, որով նա մեզ անհասանելի տրամաբանութեամբ մը կաթողիկոսական արժանաւոր ընտրելիներ կը համարէր հաւասարապէս թէ Օրմանեան և թէ Իզմիրլեան, իրենց ուղղութիւններով երկու հակոտնեաները։ Կը հասկնանք, որ մէկը կարենայ օրմանեանական մը ըլլալ, ինչպէս ուրիշ մը իզմիրլեանական մը, բայց անկարելի է չը կասկածիլ նկարագրին վրայ անոր, որ միանգամայն օրմանեանական մըն է, որքան իզմիրլեանական մը։ Այս տարօրինակ հասականութիւնը (եթէ կուզէք) Չերազի վերջին գիւտը կըլլայ և բաղդին մէկ չար զուգադիպութեամբ մը, թէ շուքի տակ ծածկուն կարգ մը ազդեցիկ ներշնչումներ ազդած. ժողովի մը մէջ ան եգիպտահայուն պատգամաւոր կընտրուի, ինչ որ պարզապէս կը նշանակէ Իզմիրլեանին անուան տակ Օրմանեանին ընտրութիւնը յաջողցնել։

[illegible] չէ, կը շնորհաւորենք Աղեքսանդրիոյ նորընտիր երեսփոխանութիւնը իրեն այս անդրանիկ յաջողութեանը համար։

Ճիշդ է թէ պիտի գրուի իրեն, որ միայն Իզմիրլեանին քուէ տայ, սակայն զինք ազատ թողուցած են բ.-ին և [illegible] ցանկին համար....։ Եւ յետոյ միմիայն իբր պատգամաւոր Իզմիրլեանին համար քուէ տալը բաւական չըլլալով Եգիպտոսի պէս կարևոր թեմի մը պատգամաւորը հոն միւսներուն մէջ ի նպաստ Իզմիրլեանին մեծ պրօպագանդիստ մը կըրնար ըլլալ, ինչ որ ոչ մէկ ոյժով և օրէնքով կարելի է պարտաւորցնել Չերազը այդպէս ընելու։ Ահա աւելի կարևոր պարագան. աւելի քան իրեն իբր մէկ պատգամաւոր տալիք քուէն։

Ժողովուրդը անմիջապէս անդրադարձաւ գործուած այս կամաւոր սխալին վրայ և ջանքեր մը կըլլան հնարաւոր սահմաններու մէջ զայն դարմանելու համար։ Կամ այն է, որ Մինաս Չերազ աչքի առաջ ունենալով եգիպտահայուն այս բաղձանքը իր խղճի դէմ համարի ընդունիլ իրեն ընծայուած պատգամաւորութեան պաշտօնը և հրաժարի անկէ, կամ այն է, որ երեսփոխանութիւնը անդրադառնալով եղած սխալին վրայ՝ փոխէ իր տուած որոշումը, և կամ այն է, որ Մինաս-Չերազ հիմնեալ իրեն վստահեցուած պաշտօնին լիազօրութեան վրայ՝ ժողովրդեան իղձերուն դէմ քալէ...։

Եւ ինչու այս ամենը։ Պարզապէս անձնական, դասակարգային և կուսակցական հաշիւներու համար։ Արդարև Եգիպտոսի մէջ չկա՞ր մէկ հայ անհատ մը, որ կարենար արժանաւորապէս ներկայացնել այս կարևոր գաղութը և անոր բաղձանաց հաւատարիմ թարգման ըլլալ հոն, առանց պէտք ըլլալու որ Դիոգենէսի լապտերը ձեռքը Պարիզ փնտռտուքի ելլէին։

Ներկայ որոշումէն օգտակար հետևութիւն մը չենք սպասեր, ու ցաւալի է նկատել, որ եթէ փոփոխութիւն մը չըլլայ, մեծ յոյսերով սկսուած այս ժողովրդական շարժումը հոս ընդհանուր յուսախաբութեան մը մէջ պիտի խեղդուի....։

Մին

Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Կ. Պոլսից վերջին պօստով ստացված «Աբենդլեր» համարներում զետեղված է Թիւրքական մայրաքաղաքի բանտից արձակված քաղաքական բանտարկեալների ամբողջական ցուցակը, որից ստորև զետեղում ենք միայն հայ բանտարկեալների անունները։

Արձակված են Կ. Պոլսի Կենտրոնական բանտից հետևեալները.

Կարապետ Յակոբեան (խարբերդցի, մահվան դատապարտված), Մանուկ Կերոսեան, (սվազցի, մահվան դատապարտված), Նշան Օհաննէսեան (սվազցի, մահվան դատապարտուած), Առաքել Մկրեան (սվազցի, մահվան դատապարտված), Ստեփան Ալէքեան (սվազցի, մահվան դատապարտված), Վարդերես Մկրեան (մէրզիֆունցի, մահվան դատապարտված), Կարապետ Յակոբեան (էրսուտանցի, մահվան դատապարտված), Արմենակ Միքայէլեան (էկինցի, մահվան դատապարտված), Արտաշ Կարապետեան (սկիւտարցի, մահվան դատապարտված), Միհրան Աւետիսեան (կ. պոլսեցի, մահվան դատապարտված), Շիրաղի Բենիամին (պարսկաստանցի, ցկեանս բերդարգելութիւն), Յակոբ Խաչիկեան (կ. պոլսեցի, ցկեանս բերդարգելութիւն), Գրիգոր Երլերեան (կ. պոլսեցի, ցկեանս բերդարգելութիւն), Երուանդ Թէօբիլեան (կոստանդնուպոլսեցի, ցկեանս բերդարգելութիւն), Ստեփան Սեդրակեան (կեսարացի, ցկեանս բերդարգելութիւն), Օհաննէս Սարգիսեան (սվազցի, ցկեանս բերդարգելութիւն), Բրօն Պետրոսեան (բիթլիսցի, ցըկեանս բերդարգելութիւն), Յովսէփ Թորոսեան (սվազցի, ցկեանս բերդարգելութիւն) Հայկ Գառնիկեան (շապին-գարահիսարցի, ցկեանս բերդարգելութիւն), Ռուբէն Նիկողոսեան (շապին-գարահիսարցի, ցկեանս բերդարգելութիւն), Օհաննէս Կարապետեան (սվազցի, տասնհինգ տարի բերդարգելութիւն), Մանօլ Մարգարեան (բիթլիզցի, տասնհինգ տարի բերդարգելութիւն), Պօղոս Պետրոսեան (բիթլիզցի, տասնհինգ տարի բերդարգելութիւն), Արտաշ Յակոբեան (կ. պոլսեցի, տասը տարի բերդարգելութիւն), Ստեփան Սիմօնեան (հէզարղրատցի, վեց տարի բերդարգելութիւն), Նազարէթ Շահնէսեան (մարաշցի, հինգ տարի բերդարգելութիւն), Ալիքսան (կ. պոլսեցի, հինգ տարի բերդարգելութիւն), Ալիքսան Միքայէլեան (կ. պոլսեցի, չորս տարի բերդարգելութիւն), Աւետիս Յակոբեան (էրզրումցի, չորս տարի բերդարգելութիւն), Արթին Աբգարեան (կ. պոլսեցի, երեք տարի բերդարգելութիւն), Հայկ Ալիքսանեան (բաղարջէօյցի, երեք տարի բերդարգելութիւն), Երուանդ Գըրըսեան (կ. պոլսեցի, երեք տարի բերդարգելութիւն), Թադէոս Յակոբեան (կ. պոլսեցի, երեք տարի բերդարգելութիւն), Ռուբէն Եուսուֆեան (յունաստանցի, երեք տարի բերդարգելութիւն), Երուանդ Ասատուրեան (կէյվէցի, երեք տարի բերդարգելութիւն), Արթին Կարապետեան (Թէքիրդաղցի, մէկ տարի բերդարգելութիւն), Վիգէն Սուսիկեան (արաբկիրցի, մէկ տարվան բերդարգելութիւն), Գրիգոր Կարապետեան (պարսկաստանցի, վեց ամսվան բերդարգելութիւն)։

Բացի սրանցից՝ ոստիկանական մինիստրութեան բանտում գտնվող 120 քաղաքական յանցաւորներ ևս ազատ են արձակված։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

31 յուլիսի

ԿԻԵՎ։ Հարաւ-արեմտեան երկաթուղագծի Բեսարաբիայի շրջանում ուժեղ հեղեղը շատ տեղերում ծածկեց երկաթուղագծերը։ Ի լրումն անցեալ հեղեղների հասցրած աւերածութիւնների, մարգագետինները, բանջարանոցները և դաշտերը ջուրը տարաւ։

ՎԻԼՆԱ։ Յուլիսի 24 ին Նովօգրուդօկ կայարանում գնացքի վրա յարձակվողներից ժանդարմները ձերբակալեցին ութ հոգու։

ԻՇԼ։ Երէկ կայացաւ պաշտօնական ճաշ ի պատիւ Էդուարդ Թագաւորի։ Ներկայ էին երկու միապետները, կայսերական միսսիայի անդամները, շքախմբերը, բարօն Էրէնտալը և սըր Չարլզ Հարդինգը, անգլիական դեսպանատան պաշտօնեաները, Լօնդօնի աւստրօ-ունգարական դեսպանը և այլք։

Ֆրանց Յովսէփ կայսրը առաջարկեց Էդուարդ Թագաւորի առողջութեան կենացը և անկեղծ ուրախութիւն յայտնեց և սրտագին շնորհակալութիւն արաւ կայսրի այցելութեան առիթով։

«Ձերդ մեծութեան ներկայութեան մէջ մեր միջև գոյութիւն ունեցող սրտագին և բարեկամական յարաբերութիւնների գնահատելի նոր ապացոյց տեսնելով, բարձրացնում եմ բաժակս ձերդ մեծութեան համար»։

Երաժշտութիւնը նուագեց անգլիական ազգային օրհներգը։

Պատասխանելով կենացին, Էդուարդ Թագաւորը անկեղծ շնորհակալութիւն յայտնեց բարեացակամ խօսքերի համար, որոնցից խորապէս զգացված է, և ասաց, որ նա հանապազ անկեղծ ուրախութիւն է զգում այցելել Ֆրանց Յովսէփ կայսրին, սակայն առանձին ուրախութիւն է պատճառում այս տարվայ այցելութիւնը, երբ Ֆրանց Յովսէփ կայսրը տօնում է իր Թագաւորութեան վաթսունամեայ յօբելեանը։

«Ձերդ մեծութիւն,—ասաց Թագաւորը,—ըմբռնեցէք այն զգացմունքները, որպիսիք ես տածում եմ վաղուց անտի դէպի ձեզ, և իմացէք, որ նշանաւոր տօնի առիթով իմ շնորհաւորութիւնները բղխում են սրտիս խորքից. մեր երկիրների յարաբերութիւնները միշտ եղել են բարեկամական և իմ անկեղծ ցանկութիւնն է, որպէսզի այդպէս էլ մնան ապագայում։ Յուսամ, որ ձերդ մեծութիւնը դեռ երկար տարիներ կը Թագաւորէ ձեր ժողովուրդների բարգաւաճութեան համար»։

Էդուարդ Թագաւորը բաժակը առաջարկեց Ֆրանց Յովսէփ կայսրի առողջութեան համար։

ՏՈՒԼԱ։ 4 յայտնի աւազակների ձերբակալելու ժամանակ, մէկը ատրճանակով վիրաւորեց երկու քաղաքապահ ոստիկանների, որոնցից մէկը մեռաւ։

ՊԵՏՐՕԶԱՎՕԴՍԿ։ Պետերբուրգի դատաստանական պալատի գլխաւոր նախագահի կեանքի դէմ մահափորձ կատարողին զինուորական նահանգական դատարանը դատապարտեց մահվան պատժի, միևնոյն ժամանակ որոշեց միջնորդել ուր հարկն է, որ այդ պատիժը մեղմացվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական գլխ. դատարանը անուշադիր Թողեց մահվան դատապարտված չորս գիւղացիների բողոքագիրը։ Ռուսաստանում կատարած ճանապարհորդութիւնից վերադարձաւ մեծ իշխան Կօնստանտին Կօնստանտինովիչը։

Բարձրագոյն հրովարտակի համաձայն, հրատարակված են այն կանօնները, որոնց համաձայն Ֆինլանդիայի պօստային մասը միանում է կայսրութեան պօստային մասի հետ և գործում միևնոյն կանօններով։

Բալտիական երկաթուղագծի Լիգօվօ կայարանի մօտ, Գօրէլօվօ ամարանոցատեղում այրվեցին 20 ամարանոցներ. հրդեհին զոհ գնացին երկու մարդ։

ԻՇԼ։ Պաշտօնական։ Ճաշից յետոյ կայացաւ րառւտ, ապա երկու միապետները լսեցին Վիէննայի երգեցիկ խմբի սերենադան, պատշգամբից նայեցին Իշլը շրջապատող լեռների հրավառութիւնը։ Այնուհետև Ֆրանց-Յովսէփը ուղեկցեց Էդուարդ Թագաւորին մինչև հիւրանոց. այնտեղ Թագաւորն ընդունեց բարօն Էրէնտալին կէս ժամով ունկնդրութեան։

ԲԵՐԼԻՆ։ «Berl. Tagebl.»-ին հաղորդում են Կրօնբէրգից, որ անգլիական արքայական զոյգը 1909 Թ. սկզբում կը գայ Բերլին։ Նաև մի քանի տեղեկութիւններ են հաղորդում Թագաւորի և կայսրի խօսակցութեան մասին։ Եղած տեղեկութիւնների համաձայն, կարելի է կարծել, որ խօսվել է Թագաւորի և կայսրի փոխ-այցելութեան մասին, Բերլինում անգլիական նոր դեսպան նշանակելու մասին, վերջապէս Թիւրքիայի մասին։ Պատասխան-այցելութիւնը հանդիսանում է միանգամայն բնական, որովհետև այժմ երկու միապետները Կարլ-Հէսէնսկու հիւրերն էին։ Թիւրքիայի վերաբերութեամբ Գերմանիան և Անգլիան համաձայն են միւս պետութիւնների հետ։ Գործելու ամենաճիշտ միջոց համարվում է սկզբում բարեացակամօրէն չը միջամտել Թիւրքիայի լիբերալ շարժման նկատմամբ։ Յամենայն դէպս, կրօնբէրգսկի օրը կը յիշատակվի անգլօ-գերմանական յարաբերութիւնների համար։

ԻՇԼ։ Էդուարդ Թագաւորը առաւօտեան ժամը 10 և 20 րոպէին մեկնեց Մարիէնբադ, սրտագին մնաս բարով ասելով Ֆրանց-Յովսէփ կայսրին։ Երկու միապետների կայարան գնալու ճանապարհին խուռն ամբոխը ցնծագին ողջունում էր։

ՎԻԷՆՆԱ։ Լրագիրները մատնանիշ են անում երկու միապետների կենացների խաղաղասիրական տօնը, նաև այն հանգամանքի վրա, որ Աւստրօ-Ունգարիայի և Անգլիայի քաղաքագէտները մի աչքով են նայում Թիւրքիայի դէպքերին։ Այժմ արևելեան հարցի վերաբերութեամբ լիակատար համաձայնութիւն է տիրում բոլոր այն պետութիւնների քաղաքականութեան մէջ, որոնք ցանկանում են Թիւրքիայի վերածնութիւնը հանուր խաղաղութեան բարիքի համար։

ԲԵԼԳՐԱԴ։ Սկուպշտինան, վերջացնելով Սերբիայի և Աւստրօ-Ունգարիայի առևտրական դաշնագրի նախագծի ընդհանուր վիճաբանութիւնները, որոշեց դիմել յօդուածային քննութեան։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի ներքին և նեարդային։

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԻՐԻԿՈՒՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլօվօդսկում, հիւրանոց «Ռօսսիա»։
(ա. օ.) 100—94

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—96

Լոյս տեսաւ
ՀԱՍԿԵՐ
№ 7 յուլիս

1. Ձեղաւ—2. Կաչաղակը հովիւ—3. Սօփիկն ու կովը,—4. Մեր վառիկը, Յ. Աղաբաբի—5. Դըժար տարի, (ժողովրդականից) Յ. Թումանեանի—6. Երկու քոյր, Ստ. Լիսիցեանի—7. Անմաղր, հին բաներից—պատմուածք Յովհ. Թումանեանի—8. Ծիլն ու ապառաժր, իմ փոքրիկ աղջկան պատմածս զրոյցներից Վ. Փափազեանի—9. Սառա կրու, վէպիկ (շարունակութիւն) Ֆ. Գ. Բերնետի, Թարգմ. Շուշ. Տէր-Նիկողոսեան—10 Թէ ինչու է շունը Թշնամի կատուին, զրոյց Նիկ. Սարգսեանի—11. Դէսից-դէնից —12. Ջուարճալիք,—Մարիամ տատիկի տոպրակից—13. Յայտարարութիւններ։

№ 8 օգոստոս

1. Արտուտի երգը.—Յովհ. Թումանեանի. 2. Երկու աղջիկ և երկու տիկնիկ—Եւգենիի Ելչինիի, Թարգմ. Մ. Ս. 3. Կալը.—պատկեր Գաբրիէլեանի. 4. Փիսօն և փիսան.—Ջաւախեցու.—5. Ծիլն ու ապառաժը.—պատմուածք Վ. Փափազեանի. 6. Սառա Կրու.—վէպիկ Բերնետի, Թարգմ. Շուշ. Տէր-Նիկողոսեանի. 7. Դէսից-դէնից, 8. Մարիամ տատիկի տոպրակից

Մանկավարժական գրադարան

XVI Ռուդոլֆ Լեման—Ժառանգականութիւնն ու դաստիարակութիւնը, Թարգմ. գերմ. Լևոն Բաբայեան։

Բաժանորդագրութիւնը չը նորոգած կիսամեայ բաժանորդներին այս № ը չէ ուղարկվում։

Կիսամեայ բաժանորդագինը 2 ր. 10 կ., առանց մանկավարժականի՝ 1 ր. 80 կ.։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Թիւրք
սահմանադրութիւնը
և
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1) Կայսերական հրովարտակը, Աբդիւլ-Համիդի պատկերով
2) Սահմանադրութիւնը, Միթհադ փաշայի պատկերով
3) Երկու խօսք «Միթհադեան սահմանադրութեան» մասին
4) Ահմէդ Րիզայի կենսագրութիւնն ու պատկերը
5) «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութ. ծրագիրը
6) Սաբահէդդինի կենսագրութիւնն ու պատկերը
7) «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնութեան» կուսակ. ծրագիրը
8) Դոկտ. Աբդուլլահ Ջէվդէթի կենսագրութիւնն ու պատկերը
9) «Շուրայի Օսմանի» կուսակցութեան ծրագիրը
Կազմեց Տ. ՋԱՒԷՆ
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Վ. Վարդանեան, Типографія «Эпоха», Гановская № 3. Միւս քաղաքներից փողի փոխարէն կարելի է ուղարկել նամականիշներ։
6—5

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
ԴԱՍԱԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴԸ
և
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ
Պատկերազարդ
և
2 ՔԱՐՏԷՍՈՎ
ՅԱՏԿԱՊԷՍ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ հայոց ծխական դպրոցների III բաժանմունքի համար, համաձայն 1906 Թ. մշակված դպրոցական ծրագրի։ Հասցէ. գրավաճառանոց «Գուտտենբերգ»։
(796) 3—3

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԸՆԹԱՑ	ՓՈՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից դուրս գալը . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը .	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը.	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը. . . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը. .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . .	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը. .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրօպօլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը. . . .	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
աւարտած Թիֆլիսի III գիմնազիան և երաժշտական դպրոցը, և
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
գիմնազիայի վկայականով, որոնում են Թիֆլիսի կամ գաւառների ուսումնարաններում ԴԱՍԵՐ ռուսաց լեզուի, Թւաբանութեան և երգեցողութեան։ Հասցէ՝ Тифлисъ, Авлабаръ, Араратская № 14,
4—2

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԱՒԱՐՏ
ՄԻ ՓՈՐՁՎԱԾ
ՈՒՍՈՒՑԻՉ-ԽՄԲԱՊԵՏ
Դասեր է որոնում հայոց դպրոցներում բոլոր առարկաներից
Պատրաստում և կառավարում է քառաձայն խումբ եկեղեցում և դպրոցում։
Հասցէն՝ Редакція „ГЕХАРВЕСТЪ", регенту.
(ու. շ. կ. ե.) 4—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի
Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այստեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 20—11

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՈՂԱՅԻ ՍԵԿՑԻԱՆ
յայտնում է, որ բացել է բաժանորդագրութիւն իր կազմած
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՐՏԷԶԻ,
որտեղ ցուցադրված կը լինեն Անդրկովկասում հայ ազգաբնակութեան բնակած վայրերը։
Քարտէզի մասշտաբը—1 դիւյմը 20 վերստ։
Բաժանորդագրութեան ժամանակ ամեն մի հատը կարժենայ 5 ր. Լոյս տեսնելուց՝ քարտէզի գինը բաւականաչափ կը բարձրանայ։
Քարտէզը պատրաստ կը լինի հոկտեմբեր ամսին։ Բաժանորդ կարելի է գրվել կամ Միութեան գաւառական բաժանմունքներում, կամ Թէ ուղղակի դիմելով՝ Баку, Б. А. Культурному Союзу, Красноводская у., д. И. Д. Адамова.
(2, 24) 5—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի պատկերազարդ դասագիրքը
Ա. ՏԱՐԻ
II տիպ, բարեփոխված
Գինը 30 կ.
Բ. ՏԱՐԻ
Գինը 45 կ.
Գլխաւոր պահեստները՝ Թիֆլ. գրավ. „ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ" գրավաճառանոցում, Тифлисъ, книжный магаз. „Гуттенбергъ"
Բագւում՝ „Сотрудникъ"
Գումարով առնողներին 20% զեղչ։
ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ ուսուցիչներն և դպրոցները կարող են ստանալ «Գուտտենբերգի» գրասենեակից ՁՐԻ (գաւառ ուղարկվում են 14 կ. ճանապարհածախսով)։
(հ.շ.) 10—2

КАВКАЗСКІЯ МИНЕРАЛЬНЫЯ ВОДЫ:
Министерство Торговли и Промышленности.
НАТУРАЛЬНЫЯ СТОЛОВЫЯ ВОДЫ:
„НАРЗАНЪ" Кисловодскъ.
„ЕССЕНТУКИ" № 20
Продажа вездѣ. ● Главный складъ въ Пятигорскѣ.
ПРЕЙСЪ-КУРАНТЫ БЕЗПЛАТНО.
(17, 25, 2, 9) 82,038 27—10

ՍԱՆԱՏՕԳԷՆ ԲԱՈՒԷՐ
Ամրացնում է օրգանիզմը, բարձրացնում է աշխատելու ընդունակութիւնը, վերադարձնում է ախորժակը, կենսուրախութիւնը և լաւ տրամադրութիւնը։
Իսկական սանատօգէնը միմիայն Բաուէր և ընկ. ֆիրմայինն է, որի օգտակար ազդեցութեան մասին 7500-ից աւելի բժիշկներ զանազան երկիրների հրաշալի կարծիքներ են յայտնել։
Զգուշացեք ոչինչ չարժեցող կեղծիքներից!
Բրօշիւրները ուղարկվում են ձրի հէնց առաջին պահանջին. Բաուէր և ընկ. ֆիրմայի Մօսկվայի բաժանմունք, Мясницкая ул., № 31. Գլխաւոր ներկայացուցչութիւն՝ С.Петербургъ, Б. Конюшенная 29.
(մ. 17, 31, յ. 24, յուլ. 5, 19, օգ. 2, 16) 7—5

Типографія „Экономія" Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Бакинская ул. № 3.